## *Ամփոփ տեղեկատվություն*

### *2019 թվականի ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի դատական գործերի վերաբերյալ*

| Հայցի հարուցման տարին, ամսաթիվը | Գործի համար | Դատարանի անվանումը | Հայցվոր | Պատասխանող /երրորդ անձ/ | Պահանջ | Գործի ընթացքը |
|---|---|---|---|---|---|---|
| 18.01.2019թ. | ՎԴ/0171/05/19 | ՀՀ վարչական դատարան | «ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ | ՀՀ հանրային ծառայություններ ը կարգավորող հանձնաժողով | մասնակիորեն վերացնել (անվավեր ճանաչել) հանձնաժողովի 12.12.2018 թվականի №697Ա որոշումը և դրա հավելվածը՝ 811-821ՄՀց և 852-862ՄՀց ռադիոհաճախականութ յունների հատվածների օգտագործման թույլտվություններ տրամադրելու նպատակով կազմակերպվող մրցույթի մասով | ՀՀ վարչական դատարանի 17. 04. 2019 թվականի որոշմամբ վարչական գործի վարույթը կարճվել է՝ հայցից հրաժարվելու հիմքով: |
| 29.01.2019թ. | ՎԴ/0341/05/19 | ՀՀ վարչական դատարան | «Շումեն» ՍՊԸ | ՀՀ հանրային ծառայություններ ը կարգավորող հանձնաժողով | ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 16.07.2014 թվականի №269Ա որոշմամբ ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայիարտադրությ ան №0551 լիցենզիայով սահմանված՝ «Ստեփանավան-2» | ՀՀ վարչական դատարանի 03.12.2019 թվականի վճռով «Շումեն» ՍՊԸ-ի հայցը մերժվել է: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը 24 ամսով երկարաձգելու մասին բարենպաստ վարչական ակտ ընդունելուն հանձնաժողովին պարտավորեցնելու վերաբերյալ | |
| 15.02.2019թ. | ՎԴ/0275/05/19 | ՀՀ վարչական դատարան | Հովիկ Եսայան | ՀՀ հանրային ծառայություններ ը կարգավորող հանձնաժողով | ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 08.07.2005 թվականի 95Ն որոշմամբ հաստատված «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների» 4.9 և 4.13 կետերը ՀՀ Սահմանադրությանը և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջներին հակասող և անվավեր ճանաչելու վերաբերյալ | ՀՀ վարչական դատարանի 25.01.2019 թվականի որոշմամբ դիմումի ընդունումը մասով մերժվել է, մասով՝ վերադարձվել:<br>ՀՀ վերաքննիչ վարչական դատարան ներկայացված վերաքննիչ բողոքը նույն դատարանի 25.02.2019 թվականի որոշմամբ վարույթ է ընդունվել, իսկ 20.03.2019 թվականի որոշմամբ՝ մերժվել:<br>ՀՀ Վճռաբեկ դատարան ներկայացված վճռաբեկ բողոքը 18.09.2019 թվականի որոշմամբ թողնվել է առանց քննության: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 14.03.2019թ. | ԵԴ/6497/02/19 | Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան | «ՀԷՑ» ՓԲԸ | «Սագամար Սաթ» ՍՊԸ /երրորդ անձ՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով/ | Այլ ցանցերի էլեկտրամատակարարումն իր էներգատեղակայանքներով ապահովելու և պայմանագիր կնքելուն հարկադրելու վերաբերյալ | Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 08.11.2019 թվականի որոշմամբ գործի վարույթը կարճվել է՝ հայցից հրաժարվելու հիմքով: |
| | ՎԴ/2315/05/19 | ՀՀ վարչական դատարան | «Վճարահաշվարկային կազմակերպությունների ասոցիացիա» ՀԿ | ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով | ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 25.01.2019 թվականին ընդունված «Պաշտոնական պարզաբանում» վերնագրով №11 միջամտող վարչական ակտն անվավեր ճանաչելու վերաբերյալ | ՀՀ վարչական դատարանի 08.04.2019 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է: ՀՀ վերաքննիչ վարչական դատարան ներկայացված վերաքննիչ բողոքը 07.05.2019 թվականին նույն դատարանի որոշմամբ վարույթ է ընդունվել, իսկ 30.05.2019 թվականի որոշմամբ՝ մերժվել: ՀՀ Վճռաբեկ դատարան ներկայացված վճռաբեկ բողոքի ընդունումը նույն դատարանի 03.07.2019 թվականի որոշմամբ մերժվել է: |
| | ՎԴ/4065/05/19 | ՀՀ վարչական դատարան | «Վճարահաշվարկային կազմակերպությունների ասոցիացիա» ՀԿ | ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով | ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 12.07.2017 թվականի ընդունված <<Բաժանորդների կանխավճարային և հետվճարային հաշիվների համալրման, | ՀՀ վարչական դատարանի 07.06.2019 թվականի որոշմամբ դիմումը վերադարձվել է: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 02.11.2019 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է՝ ուժի մեջ թողնելով «Դիմումը վերադարձնելու մասին» |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | վերալիցքավորման քարտերի վաճառքի և հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների դիմաց վճարումների ընդունման մասին>> թիվ 307-Ն որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ | 07.06.2019 թվականի որոշումը: «Վճարահաշվարկային կազմակերպությունների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից 10.07.2019 թվականին դիմումը կրկին ներկայացվել է ՀՀ վարչական դատարան, որի ընդունումը մերժվել է նույն դատարանի 18.07.2019 թվականի որոշմամբ: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 15.07.2019 թվականի որոշմամբ բողոքն ընդունվել է վարույթ, իսկ 02.09.2019 թվականին՝ մերժվել: |
| 17.06.2019թ. | ՎԴ5/0108/05/19 | ՀՀ վարչական դատարան | «Անի» ԲԲԸ | ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով /երրորդ անձինք՝ «Էրստեդ», «Լայթէկո» և «Ֆենիալ» ՍՊԸ/ | ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 05.06.2019 թվականի №201Ա որոշումը վերացնելու վերաբերյալ | ՀՀ վարչական դատարանի 15.08.2019 թվականի վճռով «Անի» ԲԲԸ-ի հայցը բավարարվել է: Դատարանի որոշումը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ վարչական դատարան: |
| 02.07.2019թ. | ՎԴ5/0118/05/19 | ՀՀ վարչական դատարան | ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով | «Անի» ԲԲԸ /երրորդ անձինք՝ «Էրստեդ», «Լայթէկո» և «Ֆենիալ» ՍՊԸ/ | էլեկտրական էներգիայի արտադրության №0322 լիցենզիայի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ | ՀՀ վարչական դատարանի 24.10.2019 թվականի որոշմամբ հայցը կարճվել է՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով: Դատարանի որոշումը բողոքարկվել է հանձնաժողովի |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | կողմից ՀՀ վերաքննիչ վարչական դատարան: |
| 31.10.2019թ. | ՎԴ5/0163/05/19 | ՀՀ վարչական դատարան | «Անի» ԲԲԸ | ՀՀ հանրային ծառայություններ ը կարգավորող հանձնաժողով | 25.06.2019 թվականի «ԱՆԻ» բաց բաժնետիրական ընկերության նկատմամբ տուգանք կիրառելու, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 15-ի N375Ա և 2019 թվականի մայիսի 29-ի N160Ա որոշումներում փոփոխություններ կատարելու և «Ջրածոր» փոքր հիդրոէլեկտրակայանի ց առաքված էլեկտրական էներգիայի դիմաց կատարված ավել վճարումների վերադարձի մասին» N399Ա որոշումը | ՀՀ վարչական դատարանի 31.10.2019 թվականի որոշմամբ վարչական ակտի կատարումը կասեցվել է: 22.11.2019 թվականին հանձնաժողովի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | վերացնելու վերաբերյալ: | |

***Իրավաբանական և լիցենզավորման վարչության պետ՝*** ***Հ. Ղազարյան***